ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2023 **թ. հունիսի 16-ի** թիվ 15 արտահերթ նիստի

ՀՀ, ք. Երևան 16.06.2023 թ.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր Հ. Հովհաննիսյանի առաջարկությամբ ներկայացված օրակարգով ու ժամանակացույցով 2023 թ. հունիսի 16-ին տեղի ունեցավ ԵՊՀ գիտական խորհրդի թիվ 15 նիստը: Նիստին մասնակցեցին գիտական խորհրդի 80 անդամներից 74-ը (կից ներկայացվում է ցուցակը):

Նիստը նախագահում էր ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Մերի Հովհաննիսյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի ընտրություն (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
2. ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի ընտրություն (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
3. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի ընտրություն (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):
4. ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի ընտրություն (զեկ.՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան):

ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, ողջունելով գիտական խորհրդի անդամներին, տեղեկացրեց, որ հրավիրվել է գիտական խորհրդի արտահերթ նիստ՝ դեկանի ընտրության օրակարգով:

Օրակարգի հաստատումից հետո ռեկտորն առաջարկեց սահմանել դեկանների մրցութային ընտրության անցկացման կարգ.

- դեկանի պաշտոնի հավակնորդների ելույթ – մինչև 15 րոպե,
- դեկանի պաշտոնի հավակնորդին ուղղված հարց ու պատասխաններ՝ առանց ժամանակային սահմանափակման, եթե սահմանափակման անհրաժեշտություն առաջանա, հարցին կտրվի 2, իսկ պատասխանին՝ 3 րոպե,

- արձագանքին՝ 1, պատասխան արձագանքին՝ 2 րոպե,
- ելույթներին՝ մինչև 3 րոպե,
- եզրափակիչ ելույթին՝ մինչև 5 րոպե:

Մինչև դեկանի պաշտոնի հավակնորդներին ձայն տալը ԵՊՀ գիտական քարտուղար Մերի Հովհաննիսյանը ներկայացրեց ընթացակարգային որոշ հարցեր, հավակնորդների անվանացանկը, ինչպես նաև խոսեց թեկնածուների գիտամանկավարժական գործունեության մասին:

Ըստ ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգի»՝ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի պաշտոնավարման ժամկետի ավարտից 30 օր առաջ ռեկտորի հրամանով նշանակվել է ընտրություն, հայտարարությունը հրապարակվել է ԵՊՀ կայքէջում, ընտրության մասնակիցների փաստաթղթերի համար սահմանվել է 15-օրյա ժամկետ: Ըստ պահանջվող կարգի՝ հավակնորդների անվանացանկը հրապարակվել է ԵՊՀ կայքէջում:

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնի համար դիմում ներկայացրած հավակնորդն է.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	Զբաղեցրած պաշտոնը
1.	ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆՆԱ ՖԵԼԻՔՍԻ	քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ	Ֆարմացիայի ինստիտուտի գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրեն

ԵՊՀ սոցիոլագիայի ֆակուլտետի պաշտոնի համար դիմում ներկայացրած հավակնորդն է.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	Զբաղեցրած պաշտոնը
1.	ՄԿՐՏԻՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԵՐՎԱՆԴԻ	փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր	Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար դիմում ներկայացրած հավակնորդն է.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	Զբաղեցրած պաշտոնը
1.	ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ ԳԱԳԻԿԻ	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ	Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի պարտականությունները ժամանակավորապես կատարող

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար դիմում ներկայացրած հավակնորդն է.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Գիտական աստիճան, կոչում	Զբաղեցրած պաշտոնը
1.	ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԵՐՈՒԺԱՆԻ	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ	Ընդունելության և դիմորդների հետ տարվող աշխատանքների

			կենտրոնի փոխտնօրեն

1. **ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի ընտրություն**:

ԵՊՀ ռեկտորը հրավիրեց Խաչատուր Ներկարարյանին՝ ներկայացնելու ստորաբաժանման զարգացման հայեցակարգը: Ելույթին հաջորդեցին հարց ու պատասխաններ, արձագանքներ:

Ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝ Դավիթ Հովհաննիսյան, Ժակ Մանուկյան, Նարեկ Մարգարյան:

Քվեարկության արդյունքները.

h/h	ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎ.
1.	**ՄԿՐՏՉՅԱՆ ԱՆՆԱ**	68	5	1

ՈՐՈՇՎԵՑ.

հաստատել Աննա Մկրտչյանի՝ ինստիտուտի տնօրեն ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումն ու առաջարկել ռեկտորին ընտրված տնօրենի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. **ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկանի ընտրություն:**

ԵՊՀ ռեկտորը հրավիրեց Արթուր Մկրտիչյանին՝ ներկայացնելու ստորաբաժանման զարգացման հայեցակարգը: Ելույթին հաջորդեցին հարց ու պատասխաններ, արձագանքներ:

Քվեարկության արդյունքները.

h/h	ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎ.
1.	**ՄԿՐՏԻՉՅԱՆ ԱՐԹՈՒՐ**	68	6	0

ՈՐՈՇՎԵՑ.

հաստատել Արթուր Մկրտիչյանի՝ ֆակուլտետի դեկան ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումն ու առաջարկել ռեկտորին ընտրված տնօրենի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. **ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկանի ընտրություն:**

ԵՊՀ ռեկտորը հրավիրեց Կառլեն Խաչատրյանին՝ ներկայացնելու ստորաբաժանման զարգացման հայեցակարգը: Ելույթին հաջորդեցին հարց ու պատասխաններ, արձագանքներ:

Քվեարկության արդյունքները.

h/h	ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎ.
2.	**ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ**	63	11	0

ՈՐՈՇՎԵՑ.

հաստատել Կառլեն Խաչատրյանի՝ ֆակուլտետի դեկան ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումն ու առաջարկել ռեկտորին ընտրված տնօրենի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

4. **ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանի ընտրություն:**

ԵՊՀ ռեկտորը հրավիրեց Արշալույս Գալստյանին՝ ներկայացնելու ստորաբաժանման զարգացման հայեցակարգը: Ելույթին հաջորդեցին հարց ու պատասխաններ, արձագանքներ:

Քվեարկության արդյունքները.

h/h	ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎ.
3.	**ԳԱԼՍՏՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ**	66	6	2

ՈՐՈՇՎԵՑ.

հաստատել Արշալույս Գալստյանի՝ ֆակուլտետի դեկան ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումն ու առաջարկել ռեկտորին ընտրված տնօրենի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Գիտական խորհրդի նախագահ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան